ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 38-Լ «30» օգոստոս 2023 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 8-Ի N31-Լ ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N661-Լ որոշման հավելվածի 19-րդ կետի 7-րդ ենթակետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ռազմավարական պլանավորման և մոնիթորինգի վարչության կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի հունիսի 8-ի «Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության զարգացման ծրագրերի և մոնիթորինգի վարչության կանոնադրությունը հաստատելու մասին» N31-Լ հրամանը:

9/1/2023

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ՝ Signed by: ANDREASYAN ZHANNA 6402810169 **ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

Հավելված

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի

2023թ. օգոստոսի 30-ի N 38-Լ հրամանի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) ռազմավարական պլանավորման և մոնիթորինգի վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) Նախարարության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում է:

2. Վարչությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերով, Հայաստանի Հանրապետության կառավարության և Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշումներով, Նախարարության և սույն կանոնադրությամբ, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի (այսուհետ՝ Նախարար) և Նախարարության գլխավոր քարտուղարի (այսուհետ՝ Գլխավոր քարտուղար) հրամաններով և այլ իրավական ակտերով:

3. Վարչության կանոնադրությունը հաստատում, դրանում փոփոխություններ և լրացումներ է կատարում Նախարարը:

4. Վարչության կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատում է Նախարարը:

5. Վարչության աշխատակիցները կարող են ընդգրկվել պետական կառավարման բնագավառում որոշակի գործառույթների իրականացման նպատակով ստեղծվող հանձնաժողովների կազմում, աշխատանքային և այլ խմբերում:

6. Վարչության անվանումն է՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ռազմավարական պլանավորման և մոնիթորինգի վարչություն:

2. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

7. Վարչության նպատակներն են՝

1) համակարգել Նախարարության երկարաժամկետ և միջնաժամկետ պլանավորման գործընթացները,

2) մշակել միջոլորտային համալիր ծրագրերը, մասնակցել դրանց իրականացմանը, ինչպես նաև իրականացնել մոնիթորինգ:

8. Վարչության խնդիրներն են՝

1) ապահովել կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության ոլորտներում ռազմավարական պլանավորման, զարգացման երկարաժամկետ և միջնաժամկետ պետական ծրագրերի մշակման միասնական մեթոդաբանությունը,

2) իրականացնել Նախարարության գործունեության, իրականացվող ծրագրերի մոնիթորինգ և պատրաստել հաշվետվություններ,

3) ներկայացնել ռազմավարական ծրագրերի վերաբերյալ առաջարկություններ,

4) ապահովել միջոլորտային և բազմաոլորտ ծրագրերի մշակումն ու մոնիթորինգը:

3. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

9. Վարչությունն իր լիազորությունների շրջանակներում իրականացնում է հետևյալ գործառույթներն՝ ըստ բաժինների.

7.1. Ռազմավարական պլանավորման բաժինը.

1) հավաքագրում, ամփոփում և ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացնում ՀՀ կառավարության ծրագրի և դրա իրականացման միջոցառումների վերաբերյալ Նախարարության համակարգման ոլորտների վերաբերյալ առաջարկություններ, պատասխանատու ստորաբաժանումներից ստանում է կատարման հաշվետվություններ,

2) համակարգում է ՀՀ կառավարության գործունեության միջոցառումների 5-ամյա ծրագրի մշակման և սահմանված կարգով վերանայման աշխատանքները,

պատասխանատու ստորաբաժանումներից ստանում է հաշվետվությունները, ինչպես նաև պատրաստում Նախարարության ամփոփ հաշվետվությունը,

3) համակարգում է պետական միջոլորտային և բազմաոլորտ ծրագրերի՝ Նախարարության համակարգման ոլորտներին առնչվող քաղաքականությունների և գործողությունների ծրագրի մշակումը,

4) մասնակցում է կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության ոլորտներում Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականության, հայեցակարգերի, ռազմավարությունների մշակման աշխատանքներին,

5) համակարգում է միջնաժամկետ ծախսային ծրագրի և բյուջեի նախագծերի մշակման շրջանակում Նախարարության համակարգման ոլորտների բյուջետային ծրագրային փաստաթղթերի և ոչ ֆինանսական արդյունքային ցուցանիշների մշակումը, ցուցաբերում է մեթոդական և խորհրդատվական աջակցություն մասնագիտական ստորաբաժանումներին, ինչպես նաև ներկայացնում է առաջարկություններ,

6) առաջարկություններ է ներկայացնում այլ ոլորտների պետական ծրագրերի (միջոլորտային, բազմաոլորտ, թեմատիկ), այդ թվում միջազգային, կազմակերպությունների հետ համագործակցության ծրագրերի վերաբերյալ,

7) կազմում է Բաժնի առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծեր, առաջարկություններ, եզրակացություններ, այլ փաստաթղթեր, ինչպես նաև դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումներ և ուղեցույցներ,

8) անհրաժեշտության դեպքում ներկայացնում է առաջարկներ և համակարգում է կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության ոլորտների քաղաքականությունների, զարգացման ծրագրերի ու ռազմավարությունների մոնիթորինգային ցուցանիշների, այդ թվում՝ միջազգային տարբեր հարթակներում Հայաստանը ներկայացնող ցուցանիշների համապատասխանության վերաբերյալ ուսումնասիրությունների արդյունքների ներառումը ռազմավարական բնույթի իրավական ակտերի նախագծերում,

9) Նախարարի հանձնարարությամբ պատրաստում է կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության ոլորտների ռազմավարական ծրագրերի վերաբերյալ վերլուծական և իրավիճակային հաշվետվություններ,

10) իրականացնում է օրենսդրությամբ Վարչությանը վերապահված այլ գործառույթներ:

7.2. Մոնիթորինգի բաժինը.

1) համակարգում է կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության ոլորտներում Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումների ծրագրի ոլորտային բաղկացուցիչների ուսումնասիրման, ընթացիկ մոնիթորինգի և գնահատման աշխատանքները,

2) համակարգում է կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության ոլորտների պետական ռազմավարական ծրագրերի և դրանցից բխող միջոցառումների իրականացման վերաբերյալ հաշվետվությունների հավաքագրման, ընթացիկ և ամփոփիչ մոնիթորինգի աշխատանքները, ներառյալ՝ ըստ անհրաժեշտության, այդ ծրագրերի վերանայումների և լրամշակումների վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը,

3) մասնակցում է կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության ոլորտներում Հայաստանի Հանրապետության պետական բյուջետային ծրագրերի ոչ ֆինանսական արդյունքային ցուցանիշների մշակման աշխատանքներին՝ ուսումնասիրում ցուցանիշները, առաջարկություններ ներկայացնում դրանց նպատակահարմարության վերաբերյալ, ապահովում մեթոդական աջակցություն,

4) համակարգում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի կատարողականի բովանդակային հաշվետվության կազմումը,

5) համակարգում է այլ ոլորտների պետական ծրագրերում (միջոլորտային, բազմաոլորտ, թեմատիկ) Նախարարության համակարգման ոլորտների ծրագրերի ու միջոցառումների իրականացման վերաբերյալ հաշվետվությունների կազմման, ընթացիկ և ամփոփիչ մոնիթորինգի աշխատանքները,

6) համակարգում է միջազգային պարտավորությունների շրջանակներում պատրաստվող ազգային զեկուցներում և հաշվետվություններում Նախարարության համակարգման ոլորտների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման, ամփոփման ու ներկայացման աշխատանքները,

7) մասնակցում է այլ կազմակերպությունների կողմից մշակված՝ կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության ոլորտների քաղաքականությունների,

զարգացման ծրագրերի ու ռազմավարությունների մոնիթորինգային ցուցանիշների, այդ թվում՝ միջազգային տարբեր հարթակներում Հայաստանը ներկայացնող ցուցանիշների

համապատասխանության վերաբերյալ ուսումնասիրությունների իրականացմանը և առաջարկությունների ներկայացմանը,

8) ապահովում է մեթոդական աջակցության տրամադրումը Նախարարության մասնագիտական վարչություններին՝ վերջիններիս համակարգման ոլորտների ծրագրերի արդյունավետ մոնիթորինգի ու գնահատման համար,

9) ապահովում է կրթության ոլորտի վիճակագրական հաշվետվությունների կազմման ու ներկայացման, այդ թվում՝ Կայուն զարգացման նպատակների և Կայուն զարգացման ցուցանիշների ընթացիկ մոնիթորինգի աշխատանքները,

10) համակարգում է միջազգային վարկանիշային զեկույցներում Նախարարության համակարգման ոլորտներին առնչվող բաղադրիչների ու ցուցանիշների ուսումնասիրման, վերլուծության և մոնիթորինգի աշխատանքները,

11) առաջարկություններ է ներկայացնում Բաժնի առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի ու այլ փաստաթղթերի նախագծերի և դրանցում առկա մոնիթորինգային ցուցանիշների վերաբերյալ,

12) իրականացնում է հանձնարարված ծրագրերի ընթացիկ և ամփոփիչ մոնիթորիգը, ըստ անհրաժեշտության՝ պատրաստում վերլուծական և իրավիճակային հաշվետվություններ,

13) իրականացնում է օրենսդրությամբ Վարչությանը վերապահված այլ գործառույթներ:

4. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ

10. Վարչության ղեկավարը հաշվետու է Նախարարին:

11. Վարչության գործունեությունը համակարգում և ղեկավարում է Վարչության պետը:

12. Վարչության ընթացիկ գործունեությունը կազմակերպում են բաժնի պետերը:

13. Վարչության պետը, բաժնի պետերը և աշխատակիցները համարվում են բյուջետային ծառայողներ:

14. Վարչության պետի, բաժնի պետերի և աշխատողների աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիազորությունների, շփումների և ներկայացուցչության, խնդիրների բարդության և

ստեղծագործական լուծման, գիտելիքների և հմտությունների, իրավունքների և պարտականությունների դրույթները սահմանվում են քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերով:

5. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

15. Վարչությունը կազմված է հետևյալ ներքին կառուցվածքային միավորներից՝

1) Ռազմավարական պլանավորման բաժին,
2) Մոնիթորինգի բաժին: